

## ԳԼՈՒԽ ԺԴ ԴԱՏԱՍՏԱՆ

Այդ ձմեռ ժամանակին դժուար էր ճամփան ունիցէ մարդու համար, բայց մեր սասնցուոց համար ի՞նչ էր ձիւն, սառ, ցուրտ, մանաւանդ որ Յովնան իւր խիստ սովորութեան դէմ բարեկենդանի ճանապարհորդութիւն մ'ընել կ'ուտար. միս, հաւ, ձուկ անպակաս էին ճաշին կամ ընթրեաց, եւ որպէսզի խեղճ հայ գիւղացին չի նեղի ու գաղտնիքը լաւ պահուի ըստ կարելուոյն կը ջանար աներակաց մէջ գիշերել: Ամէն տեղ Մուշեղ Վահեւունին էր, որ կը ճանապարհորդէր հարիւրի չափ թիկնապահով: Երբ գունդը Քաջբերունեաց սահմանը հասաւ, երկու երագօտն սուրհանդակ որոշեց Յովնան, որ երթան իջնեն Արճէշ եւ տան նաակները տերերուն՝ նախ զիրենք լաւ կարդացնելով թէ ինչ պիտի պատասխանեն, երբ իրենց հարցաքննութիւն լինի:

Ուստի ամենայն զգուշութեամբ առանց կասկած տալու՝ Վահեւունեաց իշխանը հասաւ Մեծոփայ հռչակաւոր վանքը: Յովնան առաջ անցնելով մտաւ ներս հիւրընկալութիւն խնդրելու իշխանին կողմէն եւ տեղեկացաւ, որ ոչ ոք չէր ճանչեր անձամբ Մուշեղ Վահեւունի, դարձաւ քանի մը կրօնաւորներով ի դիմաց վանահօր հրաւիրելու իշխանը. եւ խոսքով արդէն եւ ի բնէ իշխանագուն՝ լաւ կը կատարէր իւր պաշտօնը: Իսկ Յովնան քանի մը բեռնակիր գրաստներ առած եւ քանի չափ իւր կորովիներէն՝ կ'անցնէր այն լեռները, որ Քաջբերունեաց գաւառը Արճէշի գաշտէն կը բաժնեն եւ այդ լեռանց հարաւային ստորոտը Յարութիւն գիւղ կը թողէր կեսը իւր մարդկանց եւ միւսով կ'իջնէր Արճէշ, կը բեռնաւորէր իւր գրաստները պաշարով, պարէնով ու գտնելով իւր երկու սուրհանդակները, որ իրենց պաշտօնը կատարօսժ էին՝ նամակները տուած եւ խոստում առած թէ նոյն երեկոյին պիտի ճամփայ ելնէին իշխանները երթալու համար Մեծոփ:

Յովնանու փափագն այն էր, որ փախստեան ճամփայ չի թողու այս երկու Վահրամներու, ուստի շուտ մը դարձաւ Յարութիւն գիւղ եւ կը